

Վաղարշակ Քոսյան

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՅԻՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՖՈՆԴՈՒՄ

Հայագիտության մեջ արտահայտված է երկու կոնցեպցիա հայերենի բնույթի և գենեզիսի վերաբերյալ: Առաջին կոնցեպցիան, որ մշակվել է սկսած 19-րդ դարի առաջին կեսից, պատմա-համեմատական մեթոդի երևան գալուց հետո, Պետերմանի, Բոպի, Լաֆարդի, Ֆր. Մյուլլերի, Հյուբշմանի, Մեյերի, Աճառյանի և ուրիշ լեզվաբանների կողմից, պնդում է, որ հայերենը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին, քանի որ նրա բառային կազմում և քերականական կառուցվածքում հնդեվրոպական տարրերն ունեն խիստ կարևոր նշանակություն:

Մյուս կոնցեպցիան, որը հիմնադրված է Մառի կողմից, ժխտում է հայերենի հնդեվրոպական ծագումը և հայերենը կապում է հին փոքրասիական կամ կովկասյան լեզուների հետ: Պետք է նշել, որ այս կոնցեպցիայի ներկայացուցիչների մոտ չկա միասնական կարծիք. ոմանք գտնում են, որ հայերենում հնդեվրոպական էլեմենտների հետ միասին կարևոր դեր են խաղում նաև ոչ հնդեվրոպական էլեմենտները, ուստի այն խաչավորված է հնդեվրոպական և տեղական լեզուներից. մյուսները պնդում են, որ հայերենը ոչ թե հնդեվրոպական, այլ տեղական լեզու է, թեև նրա մեջ արտացոլվում են որոշ հնդեվրոպական էլեմենտներ՝ իբրև հնդեվրոպական և տեղական լեզուների պատմական շփման արդյունք:

Մառը վերջին շրջանում գտնում էր, որ հայերենն արտացոլում է հաբեթականից դեպի հնդեվրոպական կամ պրոմեթեիդական վիճակն անցնող ստադիան:

Հասկանալի է, որ այս երկու կոնցեպցիան էլ չէին կարող միաժամանակ ճիշտ լինել: Սովետական հայագիտության համար չափազանց կարևոր է պարզել, թե այդ կոնցեպցիաներից որն է գիտականորեն ապացուցվում, հաստատվում հայերենի ուսումնասիրության տվյալներով:

Որևէ լեզվի ծագումնաբանական պատկանելության հարցը լուծելիս անհրաժեշտ է ելնել նրա բառային հիմնական ֆոնդից և քերականական կառուցվածքից, քանի որ բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը կազմում են լեզվի սպեցիֆիկայի էությունը: Մյուս կողմից, պետք է ելնենք այն դրույթից, որ տարբեր լեզուների խաչավորման միջոցով չի առաջանում նրանցից տարբեր, նոր, երրորդ որակի լեզու: Սովորաբար խաչավորման ժամանակ հաղթում է խաչավորող լեզուներից մեկը, պահպանում է բառային հիմնական ֆոնդը, քերականական կառուցվածքը և շարունակում է զարգանալ իր ներքին օրինաչափություններով:

Սա վերաբերվում է մինչև սոցիալիզմի էպոխան տեղի ունեցած լեզվական խաչավորումներին: Հասարակության յոյություն վաղ շրջաններում լեզուն չի

ծագել տարբեր լեզուների խաչավորման ճանապարհով: Յուրաքանչյուր լեզու իհարկե պատմական զարգացման պրոցեսում կարող է ենթարկվել այլ լեզուների ազդեցության, սակայն ծագմամբ այն մոնոգենն է, այսինքն բառային հիմնական ֆոնդով և քերականական կառուցվածքով հանգում է մեկ աղբյուրի:

Ելնելով սրանից, կարծում ենք, որ հայերեն լեզուն նույնպես ծագել է մեկ աղբյուրից և ոչ թե տարբեր աղբյուրներից, ինչպես պնդում են երկրորդ կոնցեպցիայի ներկայացուցիչները:

Բառային հիմնական ֆոնդը լրացվում է փոխառության միջոցով և նոր բառերի կազմության ճանապարհով ձեռք բերած բառերով: Պատմական զարգացման ընթացքում բառային հիմնական ֆոնդը կարող է ուժեղ փոփոխության ենթարկվել, սակայն նրա նախնական միջուկը չի վերանա, քանի դեռ գոյություն ունի տվյալ լեզուն: Նույնը վերաբերվում է նաև քերականական կառուցվածքին: Յուրաքանչյուր լեզվի քերականական կառուցվածք պրիմիտիվ վիճակով ժառանգված է հիմք-լեզվից, թեև այն տվյալ լեզվի պատմական զարգացման պրոցեսում խիստ փոփոխվում է, հղկվում ու կատարելավորվում:

Այս հոդվածում մենք նպատակ ենք դրել պարզել հնդեվրոպական բառարմատների դերը հայերենի բառային հիմնական ֆոնդի և բառային կազմի մեջ:

* * *

Պատմա-համեմատական մեթոդով հայերենը առաջին անգամ ուսումնասիրել է Պետերմանը, 1837 թ. հրատարակելով իր «Հայերենի քերականությունը» (լատիներեն լեզվով գրված), որտեղ նա ցույց է տվել, որ հայերենը պատկանում է լեզուների հնդեվրոպական ընտանիքին: 1846 թ. Պետերմանից անկախ Վինդիշմանը նույնպես ցույց տվեց հայերենի հնդեվրոպական բնույթը:

Հետագայում այդ դիրքերից հայերեն լեզվով զբաղվեցին լագարդը, Ֆր. Եյուլլերը և այլ լեզվաբաններ:

Սակայն նրանք բոլորն էլ այն կարծիքին էին, որ հնդեվրոպական լեզվա-ընտանիքում հայերենը պատկանում է իրանական ճյուղին:

Հայերենի համեմատական ուսումնասիրության ասպարեզում հեղաշրջում մտցրեց Հյուբշմանը, 1875 թ. լույս ընծայելով իր «Հայերենի տեղը հնդագերմանական լեզվաընտանիքում» աշխատությունը (գերմաներեն): Հյուբշմանը՝ հենվելով հնդեվրոպական լեզուների համեմատական հնչյունաբանության օրենքների վրա, ուսումնասիրեց հայերեն բառային կազմը և նկատեց, որ հնդեվրոպական բառերը հայերենում հնչյունական տեսակետից տարբեր են արտացոլվում, որոշ բառեր ենթարկվում են մի կանոնի, մյուսները՝ այլ կանոնի: Հյուբշմանը տեսավ, որ հայերենի շատ բառեր հնչյունական կազմով նման են համապատասխան ուսույթի ունեցող բառերին:

Խորացնելով ուսումնասիրությունները, նա եկավ այն եզրակացության, որ հայերենում կան բազմաթիվ պարսկական փոխառություններ: Իր «Հայերենի քերականության» մեջ (1895—97 թթ. գերմաներեն) Հյուբշմանը մանրամասնորեն քննարկելով հայերենի պարսկական և սեմական փոխառությունները, համոզվել կերպով ցույց է տալիս, որ հայերենը ներկայացնում է ինքնուրույն ճյուղ հնդեվրոպական լեզվաընտանիքում և գտնվում է արիական և սլավոնական ճյուղերի միջև:

Հյուբշմանը տվել է 300-ից ավելի հնդեվրոպական բառերի ստուգաբանություն և ի մի է հավաքել ուրիշ ուսումնասիրողների կողմից տրված հնդեվրոպական բառերի ստուգաբանությունները, որի շնորհիվ հնդեվրոպական բառերի թիվը հասավ 438-ի:

Բայց Հյուբշմանը դրանցից 72 բառի ստուգաբանությունն առնում է կասկածի տակ (դրանք տրված են ուրիշ լեզվաբանների կողմից): Սակայն, ինչպես ժամանակին ցույց է տվել պրոֆ. Աճառյանը, Հյուբշմանի տված ստուգաբանություններից ճիշտ չեն 57-ը, դրանցից 16-ը փոխառյալ բառեր են, 11-ը՝ նույն արմատի տարբերակներ, 20-ը՝ անհայտ ծագման բառեր, 2-ը՝ բնածայն բառեր և 3-ը՝ ոչ ճիշտ արմատական ձևեր: Այսպիսով, Հյուբշմանի ներկայացրած հնդեվրոպական 438 բառերից ճիշտ է 338 բառի ստուգաբանությունը: Հայերենի համեմատական ուսումնասիրության ասպարեզում (և հայերենի ուսումնասիրության մեջ առհասարակ) ամենից արդյունավետ աշխատանք է կատարել հանգուցյալ պրոֆ. Հ. Աճառյանը: 1900-ական թվականներից նա աշխատում էր իր յոթհատորանոց «Հայերենի արմատական բառարանի» վրա, որի հրատարակությունը հնարավոր դարձավ միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո (1926—35 թթ. իրևան): Այստեղ պրոֆ. Հ. Աճառյանը առաջինը տվել է 400-ից ավելի հնդեվրոպական նոր բառերի ստուգաբանություն:

Այդ աշխատության հրատարակությունից հետո պրոֆ. Աճառյանը (մասամբ և ուրիշ ուսումնասիրողներ) տվեց ևս 40 հնդեվրոպական բառի ստուգաբանություն:

Այսպիսով այժմ հաստատված է, որ հայերենում շուրջ 940 բառ ունի հնդեվրոպական ծագում:

Անկասկած ասպագա ուսումնասիրությունները կբացահայտեն նոր հնդեվրոպական արմատներ հայերեն լեզվի մեջ:

Հայերենի ուսումնասիրությունը տարվել է նաև հին փոքրասիական և կովկասյան լեզուների հետ ունեցած կապերի բացահայտման ուղղությամբ: Այդ բնույթի հետազոտությունները սկսված էին դեռևս Ն. Յա. Մառի կողմից, որը հայերենի գեներալի հարցում ժխտում էր հնդեվրոպական լեզվաբանության նվաճումները:

Մառի ստեղծած այսպես կոչված սլավոնոտոլոգիական վերլուծությունը «բացահայտում էր» լուկ թվացող և պատահական ընդհանրություններ տարբեր ընտանիքների լեզուների միջև: Հայերենի և հաբեթական լեզուների միջև «ազգակցությունը» ցույց տալու համար նա կատարում էր ֆանտաստիկ համեմատություններ: Այդպիսի ֆորմալ ստուգաբանության օրինակ կարող է ծառայել հայերեն եղբայր և վրացերեն მეგობარი (megobari) (բարեկամ) բառերի համեմատությունը, որը նա բերում էր իբրև ասպացույց այն բանի, թե իբր հասարակության գոյության վաղ շրջաններում նույն բնույթի արտահայտել են թե՛ ազգակցություն, թե՛ բարեկամություն: Սակայն այս համեմատությունը ճիշտ չի, բանի որ հայերեն եղբայր բառի դ-ն չի կարելի համեմատել վրացերեն მეგობარი (megobari) բառի ջ (g)-ի հետ այն պատճառով, որ հայերենում այդ դ-ն ստացվել է հին լ-ից (հմմտ. աղի-անալի): Այդ բառի հին ձևն է *եղրայր: *էլրայր (eīrayr), որը կապվում է սանսկրիտի bhratar, իրա-

նական bratar, հունարեն phrater, գերմաներեն brodar, հին սլավոներեն bratu, լատիներեն frater, կելտական brathir բառերի հետ¹։

Ն. Յա. Մառը հայերեն բերան բառը կապում էր վրացերեն pir (բերան) բառին, ընդ որում հենվում էր այն փաստի վրա, որ հայերեն բարբառներում այդ բառն արտասանվում է սլերա՛ն, փերան, որոնք իբր արտացոլում են տվյալ բառի ավելի հին, հաբեթական վիճակը։ Սակայն հանրահայտ է բուլորին, բացի Մառից, որ հայերենի ձայնեղ բաղաձայնները հետագայում են խլացել և շնչեղ խլացել, հետևաբար բերան բառի բարբառային արտասանությունը նոր երևույթ է և ոչ թե նախնական վիճակի արտացոլում։ Մյուս կողմից, հայերեն բերան բառը հնդեվրոպական ծագման է և կապվում է լիտվերեն burna (կոկորդ, շնչափող), հին հյուսիսային barke (կոկորդ, վիզ) բառերին²։

Մառից հետո ուսումնասիրվեցին հայ-վրացական լեզվական կապերը, և բացահայտվեցին ընդհանուր երևույթներ նրանց միջև։ Սակայն պետք է նշել, որ հայերենի և հին փոքրասիական ու կովկասյան լեզուների բառային ընդհանրությունները համարյա չեն շոշափում հնդեվրոպական բառերին։

Հայտնի է, որ չկան ճ-ով սկսվող հնդեվրոպական բառեր, մինչդեռ կովկասյան լեզուներում ճ-ն հաճախ է գործածվում։ Պետք է ենթադրել, որ հայերենում ճ-ով սկսվող բառերի մի մասը (ոչ փոխառությունները) կապվում է քարթվելական ու կովկասյան լեզուների հետ։ Այդպես են ճահիճ, ճաղատ, ճառ, ճառագայթ, ճճի, ճիգ, ճգնել, ճնշել, ճիշտ, ճոռոմ, ճոխ, ճորտ, ճպուռ, ճոճել և այլն։

Ն. Յ. Մառը և մինչև 1920-ական թվականների նրա աշխատությունները հետևողները հայերենի և քարթվելական լեզուների ընդհանրությունների պատճառը համարում էին նախահայկական և նախավրացական լեզուների խաշավորումը, որի արդյունքն են եղել ժամանակակից հայերենը և վրացերենը։ Այս տեսակետին էին կանգնած Ն. Յա. Մառից հետո մի շարք լեզվաբաններ։

Անվիճելի է, որ հայերենում կան մի շարք բառեր, որոնք ընդհանուր են քարթվելական և կովկասյան լեզուների հետ, սակայն այդ ընդհանրությունը չի կարելի բացատրել Մառի խաշավորման տեսությամբ։ Հետաքրքրական է, որ այդ բառային ընդհանրությունների թվում կան 20 բառեր, որոնք հնդեվրոպական լեզուների համեմատական հնչյունաբանության և ստուգաբանության օրենքներով ճանաչված են հնդեվրոպական։ Այդ բառերն են՝ աղանձ, առու, բոկեղ, գերան, գոլ, գորտ, երկու, թէ՛ ինչ, մեք, մոզի, նու, ով, ոստ, ջուր, տալ (ամուսնու քույր), քար, թմրել, տիկ, փարել։ Պետք է ենթադրել, որ այս բառերը հայերենում և քարթվելական լեզուներում ժառանգություն են նրանց մեջ ձուլված մի երրորդ լեզվից (հավանաբար հնդեվրոպական ծագման)։

Այս ենթադրության օգտին է վկայում նաև այն փաստը, որ այդ բառերի մի մասը կապվում է նաև հին փոքրասիական մեռած լեզուների հետ, ինչպես այդ ցույց է տվել պրոֆ. Դ. Ղափանցյանը³։

¹ Հ. Անսոյան, Արմատական բառարան, Ի հատ., Երևան, 1928, էջ 680—693։

² Նույն տեղում։

³ Տես Դ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, էջ 21, 1940 թ. «Հայերենի խոսիտական բառերը», Երևան, 1951 թ., Хайаса — колыбель армян, 1947. «Chetto-armenijaca», 1931 թ. և այլ աշխատություններ։

Ի՞նչ ուսումնասիրություններում պրոֆ. Գ. Ղափանցյանը հայերենի բառային կազմը և քերականական կառուցվածքը ուսումնասիրում է ծագումնաբանական տեսակետից, կապելով հին փոքրասիական մեռած և այլ լեզուների հետ (խեթական, խուրիտական, ասորական և այլն)։

Հիշյալ ուսումնասիրություններում պրոֆ. Գ. Ղափանցյանը հայերենի մի քանի բառեր կապում է հին փոքրասիական լեզուների հետ։ Սկզբում պրոֆ. Ղափանցյանը այդ ընդհանրությունների պատճառ համարում էր հին լեզուների խաչավորումը, որոնցից և ծագել է, նրա կարծիքով, հայերենը, ընդ որում նա հայերենը հնդեվրոպական ընտանիքի մեջ էր մտցնում։ Հետագայում նա առաջ քաշեց այն դրույթը, որ հայերենը ծագմամբ հնդեվրոպական չէ, այլ խաչավորված է հնդեվրոպական և տեղական փոքրասիական լեզուներից։

Ընդհանուր առմամբ պրոֆ. Գ. Ղափանցյանի ստուգաբանությունները վերաբերվում են ոչ հնդեվրոպական ծագման բառերին։ Սակայն միաժամանակ նա ժխտում է 30 բառի հնդեվրոպական ծագումը, այդ բառերը կապելով հիշյալ լեզուների հետ։ Ուրիշ ուսումնասիրողներ (Ա. Մուրվալյանը և ուրիշներ) քարթվելական լեզուների հետ կապում են 13 բառ՝ ժխտելով դրանց հնդեվրոպական ծագումը։

Այսպիսով առարկություններ կան միայն 43 բառի հնդեվրոպական ծագման դեմ։

Այս բառերի ընդհանրությունը հին փոքրասիական և կովկասյան լեզուների հետ չի ժխտում նրանց հնդեվրոպական ծագումը, այլ միայն վկայում է այդ լեզուների և հայերենի հին մերձավոր կապերի մասին։

Սակայն եթե այդ էլ ի նկատի չառնենք և համաձայնվենք, որ այդ բառերը հնդեվրոպական ծագման չեն, ապա հայերենի հնդեվրոպական բառերի թիվը համարյա չի նվազի, ավելի ևս՝ չի ապացուցվի հայերենի ոչ հնդեվրոպական բնույթը։

Հայագիտության մեջ կարծիք է արտահայտվել այն մասին, որ իբր հնդեվրոպական բառերը, լինելով հայերենի բառային կազմի մյուս մասի համեմատությամբ սակավաթիվ, կարևոր դեր չեն խաղում հայերենի լեզվակազմի մեջ։

Մեր կարծիքով հնդեվրոպական բառերի դերի բացահայտման ժամանակ չի կարելի հենվել այդ բառերի և բառային կազմի մյուս մասերի մակերեսային համեմատության վրա։

Անհրաժեշտ է համեմատության ժամանակ նկատի ունենալ այն հանգամանքը, որ հայերենի բոլոր արմատներից (մոտ 11 000) ավելի քան 2200-ը չեն վկայված դրավոր տվյալներով, չեն գործածվել երբևէ և չեն գործածվում, այլ կան միայն միջին դարերի մի քանի ձեռագիր բառարաններում։

Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ Աճառյանի «Արմատական բառարանում» տեղ գտած բոլոր արմատներից միայն 4231-ն են գործածվում ժամանակակից հայերենում, որը կազմում է ընդհանուր թվի միայն 38%-ը։

Անմիտելի է, որ հնդեվրոպական արմատները սակավաթիվ են հայերենի արմատների մեջ, նրանք կազմում են «Արմատական բառարանում» եղած բոլոր արմատների միայն 10%-ը։

Հնդեվրոպական արմատների թիվը պակաս է իրանական փոխառություններից և ավելի է մյուս փոխառյալ բառերից։

Սակայն բառային հիմնական ֆոնդում ունեցած նշանակություններ ու դերով այդ արմատները խիստ կեբայով տարբերվում են բոլոր փոխառություններից:

Փոխառյալ 4000 բառերից բառային հիմնական ֆոնդի մեջ մտնում են 725-ը, այսինքն 18 տոկոսը:

Ավելի կայուն են իրանական փոխառությունները, որոնք բառային հիմնական ֆոնդում պահպանվել են 37 տոկոսի չափով: Սակայն իրանական փոխառությունների հարցը դեռևս վիճելի է հայագիտության մեջ: Հավանական են թաղրություն կա այն մասին, որ իրանական փոխառությունների զգալի մասը (հատկապես բառային հիմնական ֆոնդին պատկանող բառերը) արդյունք է հայերի կազմավորման ժամանակ իրանական և մեդական որոշ ցեղերի ձուլման հայերի մեջ¹:

Թեև փոխառյալ բառերը թվական տեսակետից մի քանի անգամ գերազանցում են հայերենի հնդեվրոպական բառերին, սակայն բառային հիմնական ֆոնդում ունեն աննշան դեր, իսկ դա ապացույց է հայերենի կենսունակությանը: Հայերենը որքան էլ ենթարկվել է այլ լեզուների ազդեցության, վերցրել է փոխառություններ, այնուամենայնիվ ամբողջությամբ պահպանել է իր բառային հիմնական ֆոնդն ու քերականական կառուցվածքը: Բառային հիմնական ֆոնդի մեջ մտած փոխառյալ բառերն արտահայտում են նոր, հասարակական, սոցիալ-տնտեսական նոր հարաբերությունների հետ կապված հասկացություններ: Փոխառության պրոցեսը տևել է հազարամյակներ, այդ պատճառով էլ սուր կեբայով աչքի չի ընկել:

Հնդեվրոպական 940 բառերից բառային հիմնական ֆոնդում պահպանվել են մոտ 725-ը, որը կազմում է ընդհանուր թվի 80%-ը: Այդ համամասնությունը ինքնին ապացույց է հնդեվրոպական արմատների կայունության ու կենսունակության և վկայում է, որ այդ արմատները կազմում են հայերենի բառային հիմնական ֆոնդի անբաժանելի մասը: Սակայն առաջ քաշելով հնդեվրոպական բառերի կենսունակության հարցը, բոլորովին էլ չենք ժխտում հայերենի շրտուգաբանված արմատների նշանակությունը (որոնք կազմում են հայերենի արմատների կեսից ավելին):

Անվիճելի է, որ շտուգաբանված արմատներից շատերը պատկանում են հայերենի բառային հիմնական ֆոնդին, ինչպես՝ հաց, փայտ, տանել, հող, դիւղ, սկսանիմ, սողալ, սովորել, վազել և այլն: Սակայն չի կարելի հնդեվրոպական բառերը համեմատել շտուգաբանված բառերի հետ և եզրակացությունների հանգել հետևյալ պատճառով: Չշտուգաբանված շտտ բառեր հնչյունական կազմությամբ հին են և հիշեցնում են հնդեվրոպական բառերը, սակայն չկան համապատասխան զուգահեռներ ազգակից լեզուներում, ուստի այդ բառերը չենք կարող հնդեվրոպական ծագման համարել:

Մյուս կողմից, այդ բառերը չի կարելի փոխառյալ համարել, քանի որ հարևան լեզուներում զուգահեռներ չեն գտնված:

Հետևաբար հնդեվրոպական բառերի համեմատությունը շտուգաբանված արմատների հետ չի կարող տալ որևէ արդյունք՝ հայերենի ծագումնաբանական պատկանելիության հարցի տեսակետից:

¹ Տե՛ս Ս. Երևմյան, հայերի էթնոդեմոգրի հարցի շուրջը («Вопросы истории», № 7, 1952):



Հնդեվրոպական արմատներն արտահայտում են կենսականորեն ամենից անհրաժեշտ հասկացություններ, առանց որոնց հնարավոր չի լինի մարդկանց հաղորդակցումը: Այդպես են՝ արև, լուսին, լոյս, ամպ, բուք, ձիւն, սառն, գետ, ստեղծել, անել, ատել, ականջ, բերան, լեզու, ձեռն, մատն, սիրտ, ջերմ, այծ, աքաղաղ, գառն, եզն, էշ, կով, հաւ, ձի, շուն, գայլ, աղուէս, մուկն, օձ, ամուսին, կին, հայր, մայր, եղբայր, քույր, հարսն, բոյս, գարի, արմատ, ծառ, աճել, այտ, հերկել, հասանել, գիր, երգ, ուսանել, ամառն, ամիս, ձմեռն, անուն և այլն:

Ինչպես տեսնում ենք, հնդեվրոպական բառերի մեջ կան մարդկային կյանքի բոլոր բնագավառներին վերաբերող հասկացություններ արտահայտող բառեր: Այժմ չլ հայերենը առանց այդ բառերի չի կարող արտահայտել ամենից անհրաժեշտ հասկացություններ: Հետևաբար հնդեվրոպական արմատները այժմ էլ կազմում են հայերենի բառային հիմնական ֆոնդի էական և անբաժանելի մասը:

Հնդեվրոպական արմատները հայերենի պատմական զարգացման ընթացքում կրել են փոփոխություն: Փոքրաթիվ բառեր դուրս են ընկել բառային հիմնական ֆոնդից, թեև նրանցից կազմած բարդ ու ածանցյալ որոշ բառեր պահպանվել են բառային կազմում: Օրինակ, բառային հիմնական ֆոնդից դուրս է ընկել ամալ (լցնել) բառը, սակայն ածանցյալ աման բառը պահպանվում է բառային հիմնական ֆոնդում և հիմք է հանդիսանում բազմաթիվ բառերի համար (ամանեղեն, ոտնաման, ջրաման, ամանկոտորուկ և այլն):

Հեղուկ (թափվել) արմատը նույնպես չի պահպանվել, սակայն ածանցյալ հեղուկ, հեղեղ բառերը կան բառային հիմնական ֆոնդում:

Եթե նկատի ունենանք հին մարդու կենցաղի մակարդակը և մտավոր զարգացումը, ապա կարող ենք ասել, որ այն ժամանակ եղած հնդեվրոպական բառերը հնարավորություն տված կլինեն ազատ հաղորդակցվելու: Հետագայում հասարակության զարգացման հետ կապված ծագում են նոր հասկացություններ, որոնց արտահայտման համար մեծ մասամբ օգտագործվել են հնդեվրոպական արմատները (փոխառությունների հետ միասին): Օրինակ, եղած հնդեվրոպական ջուր և աղալ խոսքերից կազմվել է ջրաղաց, տուն և տեսանել բառերից կազմվել են տնտեսություն, տնտեսել և այլն:

Հնդեվրոպական արմատները եղել են շատ արտադրողական և այժմ էլ պահպանում են իրենց այդ հատկությունը: Այդ արմատներից կազմված բազմաթիվ բառեր ու արտահայտություններ, դարձվածներ մտել են բառային հիմնական ֆոնդ: Օրինակ, բառային հիմնական ֆոնդում կան հագուստ և հագնել ազանիմ արմատից, մտածել և վերածել՝ ածել արմատից, արի և արահետ՝ այր (տղամարդ) արմատից, գիտուն և գիտություն՝ գէտ (գիտեմ բառի արմատըն է) արմատից և այլն: Հայտնի է, որ դարձվածներն ու արտահայտությունները կազմվում են մեծ մասամբ շատ զործածական բառերից, առանձնապես մարդու մարմնի մասերի անուններից: Բայց քանի որ հայերենում մարմնի մասերի անունների մեծ մասը հնդեվրոպական բառեր են, ապա դրանով էլ բացատրվում է հնդեվրոպական արմատների գերակշիռ դերը նման կազմությունների մեջ:

Այդպիսի կազմությունների թիվը յուրաքանչյուր բառից երբեմն հասնում

է 200—300-ի: Օրինակ, աչք բառից, որն ունի 13 իմաստ, կազմվում են մոտ 200 դարձվածներ ու արտահայտություններ (որոնցից 16-ը գրաբարում, 184-ը ժամանակակից հայերենում և բարբառներում): Ձեռք բառից (14 իմաստ ունի) կազմվում են 160 դարձվածներ ու արտահայտություններ:

Բառային հիմնական ֆոնդը պահպանվում և զարգանում է գլխավորապես խոսակցական, բանավոր լեզվի միջոցով: Սա վերաբերվում է առանձնապես յուրաքանչյուր լեզվի մինչ գրավոր շրջանին:

Նլնելով սրանից, պետք է ընդունենք, որ մեզ հասած բոլոր հնդեվրոպական բառերը եղել են հայերենի բառային հիմնական ֆոնդում (քանի որ հայերենի գրավոր շրջանն սկսվում է 5-րդ դարից, իսկ մինչև այդ հայերենը դարերով եղել է միայն բանավոր վիճակում), և դրանց սակավաթիվ մասը միայն հետագայում է դուրս եկել բառային հիմնական ֆոնդից: Գրի երևան գալուց հետո էլ բառային հիմնական ֆոնդը պահպանվում և զարգանում է գլխավորապես խոսակցական լեզվի միջոցով: Սրան ապացույց կարող է ծառայել այն երևույթը, երբ բառերի իմաստներից պահպանվում և զարգանում են նրանք, որոնք հատուկ են խոսակցական լեզվին: Այսպես օրինակ, բան բառը ժամանակակից գրական լեզվում և բարբառներում նշանակում է «իր», «առարկա», «գործ», «աշխատանք» (քիչ է գործածվում «գիտություն», «իմաստություն» իմաստով, որը նրա նախնական իմաստն է եղել), իսկ նրանից կազմված բազմաթիվ ածանցյալ և բարդ ձևերից, որոնք «խոսք», «միտք» են նշանակել, դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից, քանի որ հատուկ են եղել միայն հին գրական լեզվին (գրաբարին): «Ման», «ճանաչել» բառի նախնական իմաստն է եղել «իմանալ», «ըմբռնել», սակայն զարգացել է «ծանոթանալ», «ընդունել» իմաստներով, որոնք գործածական են եղել բարբառներում:

Կարելի է տարբերակել բառային հիմնական ֆոնդից դուրս եկած բառերի 2 խումբ:

1. Մի շարք բառեր դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից, սակայն նրանցից ածանցյալ և բարդվող որոշ ձևեր պահպանվում են բառային հիմնական ֆոնդում և բառային կազմում: Այդպես են, օրինակ, ամ, ամալ, երկ(ն), որոնցից կազմված հնգամեակ, երկամեայ, աման, երկիւղ և այլն գործածվում են բառային հիմնական ֆոնդում:

2. Որոշ բառեր դուրս են ընկել բառային հիմնական ֆոնդից, սակայն ածանցյալ և բարդվող մի շարք ձևեր պահպանվում են բառային կազմում՝ իմաստափոխությամբ կամ առանց իմաստափոխության: Այդպես են՝ ասր (ասրեայ, ասուեղէն), արգահատել (արգահատանք), գան (գանահարել, գանակոծել), բուտ (բտել), գելուլ (գելարանակ), գեղմն (ներագեղմ, ոսկեգեղմ), լոյտ (լուտանք), օթ (օթևան, անօթևան), դիել (ստնտու) և այլն:

Բառային հիմնական ֆոնդից այս բառերի դուրս գալու պատճառները հետևյալներն են.

1. Որոշ թվով բառեր դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից, քանի որ նրանցով արտահայտվող առարկաները, իրերը, գործիքները դարձել են անգործածական: Այդպես են՝ աղօրի, արոր, բիր, հերին, քակոր և այլն: Հետաքրքրական է նշել, որ այդ արմատները իր ժամանակին տվել են քիչ ածանցյալ և բարդվող ձևեր:

2. Որոշ բառեր դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից իմաստային փոփոխությունների հետևանքով. օրինակ, հայերենում եղել է «բուրդ» նշա-

նակող 4 բառ՝ ասր, գեղմն, ստե, բուրդ։ Սրանցից ասր և գեղմն դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից և հազվագեպ գործածվում են բառային կազմում, ասր նշանակում է լրդի հատկությունն պարունակող, օրինակ, ասրեայ հագուստ, գեղմն նշանակում է ամբողջական բուրդ։ Սակայն այդ բառերը գործածվում են միայն գրքային լեզվում, բարձր ոճով։ Առօրյա խոսակցության ժամանակ գործածվում է բուրդ, որը և պահպանված է բառային հիմնական ֆոնդում։ Այսպիսով կատարվել է իմաստային դիֆերենցիացիա, որի հետևանքով ասր, գեղմն, ստե բառերը դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից։ Այդպես է դուրս եկել նաև սոր բառը, որը նշանակել է ծակ, խոռոչ, ծերպ։ Վերջին իմաստների տարբերակմամբ գործածական են դարձել հիշյալ բառերը, որի հետևանքով ավելորդ է դարձել սոր բառը։

Բնորոշ է այն հանգամանքը, որ բառային հիմնական ֆոնդից և բառային կազմից դուրս ընկած բառերը մեծ մասամբ չեն եղել բարբառներում, այլ միայն գրական լեզվում։ Բառային հիմնական ֆոնդից դուրս ընկած 139 բառերից 76-ը չկան բարբառներում։ Իսկ առհասարակ բառային կազմից դուրս եկած 70 բառերից 46-ը չեն եղել բարբառներում։ Այդպես են՝ ագանիմ (գիշերում եմ), աղօրի (աղաց), աւն (ինչք), գեղձն (իղձ) և այլն։

Այն հանգամանքը, որ բառային հիմնական ֆոնդից դուրս եկած բառերը մասամբ պահպանվում են բառային կազմում, վկայում է նրանց կենսունակության մասին։ Այդ կենսունակությունն առանձնապես երևում է գրական լեզվում։ Գրական լեզուն որոշ չափով պահպանողական է. այնտեղ բառերը գրավոր վիճակով համեմատաբար ավելի երկար են պահպանվում, քան խոսակցական, բանավոր լեզվում։ Դրանով պետք է բացատրել նաև այն երևույթը, որ գործածությունից դուրս եկած որոշ բառեր նորից վերակենդանանում են գրական լեզվում։ Այդպես են, օրինակ, անուրջ, ողորբել, ձաղել, որոնք ժամանակակից գրական լեզվում գործածվում են իբրև արխայիկ բառեր։ Որոշ բառեր վերակենդանանում են՝ վերաիմաստավորվելով հանդերձ։ Այդպես են դիցադնական, գործուն, հայցել, տեղանք և այլն։

Հայերենի բառային կազմից դուրս ընկած հնդեվրոպական բառերի թիվը 70 է։ Դրանք չեն պահպանվել հետևյալ երկու պատճառով։

1. Որոշ թվով բառեր դուրս են եկել գործածությունից համապատասխան առարկաների, իրերի, գործիքների հետ միասին։ Այդպես են՝ բոկեղ, դակու, դուն, դուրգն, ստորի, օդ, առատիկ, սարիք և այլն։

2. Մի շարք հնդեվրոպական բառեր դուրս են եկել գործածությունից էվֆեմիզմի օրենքով։ Դա վերաբերվում է ամենից առաջ սեռական օրգաններ և մարմնական պրոցեսներ արտահայտող բառերին։ Սակայն պետք է նշել, որ այդ բառերը պահպանվում են բարբառների բառային հիմնական ֆոնդում, որով և տարբերվում են բառային կազմից դուրս եկած մյուս բառերից։

* * *

Հնդեվրոպական բառերը կազմում են նաև հայերեն բարբառների բառային հիմնական ֆոնդի անբաժանելի մասը, քանի որ բարբառները, լինելով ընդհանուր լեզվի ճյուղավորումներ, արտացոլում են նրա բառային հիմնական ֆոնդը։ Սակայն բարբառները ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդը արտացոլում են տարբեր չափով։ Հայաստանի կենտրոնական մասի բարբառ-

ները քիչ են ենթարկվել ուրիշ լեզուների ազդեցության: Մինչդեռ ծայրամասերի բարբառները փոխ են առել զգալի թվով բառեր ուրիշ լեզուներից, ընդորում շատ փոխառություններ այդպես էլ մնացել են բարբառների մեջ և չեն անցել ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդին:

Պրոֆ. Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» մեջ նշված է, որ հայերեն բարբառներում գործածված արմատների թիվը հասնում է 2878 (սրանք այն բառերն են, որոնք գործածված են նաև գրաբարում): Սրանցից որոշ թվով բառեր ժամանակակից բարբառներում այլևս չեն գործածվում: Իսկ ամեն մի բարբառում գործածվող արմատների թիվը 1500-ից չի անցնի:

Ուսումնասիրությունների տվյալներով բարբառներում գործածվում են հնդեվրոպական 630 բառ (560 արմատ): Այս բառերն արտահայտում են կենսական անհրաժեշտ հասկացություններ և պատկանում են բարբառների ու ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդին:

Սակայն բառաստեղծական տեսակետից բարբառների բառային հիմնական ֆոնդին պատկանող բառերը քիչ արտադրողական են: Գրական լեզվում 200—300 ածանցյալ և բարդ ձևեր կազմող հնդեվրոպական շատ արմատներ բարբառներում տալիս են սակավաթիվ կազմվող ձևեր: Օրինակ, գիտեմ բառից գրական լեզվում կան 200 կազմվող ձևեր, իսկ բարբառներում՝ 15:

Այս երևույթը կարելի է բացատրել երկու պատճառով:

1. Հայերեն բարբառների գրանցումը կատարվել է շատ ուշ, ուստի շատ բարբառային ձևեր կարող են գործածությունից դուրս եկած լինել մինչև այժմ: Մինչդեռ գրական լեզվի բոլոր ձևերը հասել են մեզ, ընդորում գործածությունից դուրս եկած ձևերը վկայված են գրավոր ձևով:

2. Բարբառների բառային կազմի աղքատությամբ, որն իր հերթին բացատրվում է բարբառների ֆունկցիայով: Բարբառները ծառայում են առօրյա խոսակցության, իսկ վերջինս չի պահանջում շատ բառեր: Սովորաբար բարբառներով չի ստեղծվում գիտական, փիլիսոփայական, քաղաքական և այլ գրականություն: Այդպիսի հասկացությունները բարբառներում չեն գործածվում: Այնտեղ կան մեծ մասամբ մարդու կյանքին և կենցաղին, շրջապատի առարկաներին վերաբերող բառեր: Այստեղից էլ հասկանալի է, թե ինչու բարբառներն աղքատ են բառակազմական միջոցներով: Իսկական բարդությունը և նախածանցավոր կազմությունը քիչ տարածված միջոցներ են բարբառներում (մինչդեռ գրական լեզվում դրանցով չափազանց շատ ձևեր են կազմվում):

Հնդեվրոպական 186 բառ գործածված է առանց բացառության բոլոր բարբառներում: Այդպես են, օրինակ, ականջ, աղ, աղբիւր, ամառն, ամիս, ամպ, այրել, անուն, բերել, բերան, գալ, գայլ, գիշեր, գործ, դու, եղբայր, ես, երես, լոյս, հող, մայր, մարդ, ջուր, սիրտ և այլն: Սրանք առանց բացառության մտնում են նաև ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ:

Հնդեվրոպական 156 բառ գործածված է բարբառների մեծ մասում և չկա սակավաթիվ բարբառներում: Այդպես են, օրինակ, աղուէս, աճել, այգի, այծ, այր, առու, արտ, աւազ, ափ, բոյս, դառն, գարուն, գետ, դտանել, գոմ, դարբին, եզն, երգ, լաւ, լուծ, կամուրջ, կայծ, հերկ, ձի, սար, ստեղծել և այլն:

Սրանք նույնպես մտնում են ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդի մեջ: Հավանաբար այս բառերի մի մասը ժամանակին եղել է նաև մյուս բարբառներում և հետո է դուրս ընկել: Որոշ թվով բառեր էլ ունեն նեղ-տիրիտորիալ նշանակություն, այդ պատճառով էլ չեն կարող լինել բոլոր բարբառներում

հավասարապես: Այդպես են՝ գոմ, երկան(ք), տիկ, թի, աղանձ, հացի, բով, որթ, հերկ, լուծ, կորկոտ, գերան և այլն:

Հնդեվրոպական 215 բառ գործածված են քիչ թվով բարբառներում: Դրանցից են՝ անկին, անձն, առաստաղ, առիւծ, ատել, արգանդ, արծուի, ատամն, դուստր, թեքել, թիւ, թուփ, կատակ, հիւթ, հոտ, ձող, նետել, յատակ, սառն, ստանալ, կեղտ և այլն: Սրանցից 21 բառ միայն մեկական բարբառում են գործածական:

Այս կատեգորիայի բառերը տալիս են սակավաթիվ անծանցյալ և բարդ-վող ձևեր ոչ միայն բարբառներում, այլև ընդհանուր լեզվում: Գրական լեզվի բուռն վերելքի շնորհիվ բարբառային շատ բառեր աստիճանաբար դուրս են դալիս բարբառների բառային ֆոնդից:

Պետք է նշել, որ հայերեն «Կ» ճյուղի բարբառների բառային կազմը (ինչպես նաև «Լ» և «Ս» ճյուղերի) տարբերվում է «Ում» ճյուղի բարբառների բառային կազմից հնդեվրոպական որոշ բառերի գործածության տեսակետից: Սրինակ, ատեան (ժամանակ իմաստով), դուլ (դադար), խածանել, տեւել, ցայտիկ և այլ բառեր գործածվում են միայն «Կ» ճյուղի բարբառներում, թաքչիմ, հուլ (տալ), մուլ, սառն և այլ բառեր գործածվում են «Ում» ճյուղի բարբառներում: Կարելի է ենթադրել, որ այդ տարբերությունը գալիս է հայերենի կազմավորման շրջանից:

Հնդեվրոպական 157 բառ, լինելով ընդհանուր լեզվում, չկան բարբառներում: Այդպես են, օրինակ, աղմուկ, ամուսին, ամպրոպ, և, որովայն, պեղել, աճիւն, այտ, այց, անձուկ, ատաղձ, գեղ(եցիկ), կոկորդ, ծնոտ, հողմ, հոյակապ, ձօն, նեարդ, ունայն, տարտամ, սլաք, յանդուգն, ըմբոստ և այլն:

Սրանցից 71 բառ դուրս է եկել ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդից:

* * *

Հնդեվրոպական արմատները բազա են հանդիսացել հազարավոր ածանցյալ և բարդ ձևերի կազմության համար: Սակայն դրանք բոլորն էլ հավասար մասնակցություն ցույց չեն տվել հայերենի լեքսիկայի հարստացմանը: Այդ տեսակետից նրանք բաժանվում են մի քանի կատեգորիայի:

Որոշ թվով բառեր եղել են արտադրողական, տվել են ածանցյալ և բարդ-վող բազմաթիվ ձևեր, սակայն հետագայում դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից, այդ ձևերի հետ միասին:

Մյուս կատեգորիայի բառերը դուրս են ընկել բառային հիմնական ֆոնդից, սակայն նրանցից կազմվող մի քանի ձևեր սահպանվել են բառային կազմում:

Որոշ թվով բառեր էլ քիչ արտադրողական են եղել ընդհանրապես: Դրա սլաշաճ գործածության նեղ շրջանակ ունենալն է, մարդկային իմացության զարգացման մեջ խաղացած աննշան դերը:

Գործածության մեջ եղած 570 հնդեվրոպական բառերից 440-ը արտադրողական են եղել մշտապես: Դրանք սակավ բացառությամբ մտնում են բառային հիմնական ֆոնդի մեջ:

Հնդեվրոպական արմատներից կազմվող ածանցյալ ու բարդ ձևերի թիվը հասնում է 30 000-ի, որը կազմում է հայերենի ողջ բառային կազմի մոտ 20 տո-

կոսր: Սակայն կազմվող ձևերի ամբողջ հարստությունը չի պահպանվել լրիվ: Բազմաթիվ բարդ և ածանցյալ ձևեր դուրս են եկել բառային հիմնական ֆոնդից և բառային կազմից: Այդպես են, օրինակ, անէծքաբան, անէծքաբոյս, անիծագիր, անիծակուռ, արօրաբեկ, արօրադիր, արօրակալ, գերեգին, գերշուծին, գողալեզու, գողունի, գողարուր, երէցաւորաց, երիցագունութիւն, երիցախումբ, երիցանալ, բարձերէց, ընծայաբերական, ընծայութիւն, խաշագիւտ, խաշապգեաց, խաշակերտ, խաշարդար, խաշապայծառ, հոգաբարձականութիւն, սրբագործութիւն, սրբազգեաց, սրբազնաբան, սրբանորոգ, սրբաշէն և այլն:

Ամենից շատ արտադրողական են բառային հիմնական ֆոնդում հաճախ գործածվող հնդեվրոպական բառերը: Դրանցից կազմվող բազմաթիվ ձևեր մտել են բառային հիմնական ֆոնդ: Այդպես են, օրինակ, հայրենիք, եղբայրութիւն, մայրենի, մարդկութիւն, ջրաղաց, ջրհեղեղ, ջրանցք, տնտեսութիւն և այլն:

Արտադրողական 440 բառից 319-ը արմատական բառեր են: Դրանք առարկաների, իրերի, երևույթների անուններ են և անհրաժեշտ հասկացություններ արտահայտող բառեր:

Արտադրողական արմատների մյուս խումբը կա միայն արմատական ձևով, այսինքն ինքնուրույն գործածություն չունի: Սրանք ոչ պակաս կայուն ու կենսունակ են եղել: Այսպես են բայական և անվանական արմատները, որոնցից տալիս են բայաձևեր, բայից կազմվող ածականներ և գոյականներ: Սովորաբար բայարմատներից ավելի քիչ ձևեր են կազմվում, քան անվանական արմատներից:

Հնդեվրոպական 121 բառ տվել է սակավաթիվ կազմվող ձևեր: Դրանցից բառային հիմնական ֆոնդում կան միայն 68-ը: Անարտադրողական լինելու պատճառները տարբեր են: Որոշ բառեր արտահայտում են այնպիսի հասկացություններ, որոնք թեև հաճախակի են գործածվում, սակայն ածանցյալ ձևեր չեն կարող կազմել: Այդպես են, օրինակ, անձնական և ցուցական դերանունները, օժանդակ բայը և այլն: Օժանդակ բայն ունի միայն քերականական իմաստ, բառաստեղծական դեր չի կատարում:

Բառային հիմնական ֆոնդին պատկանող որոշ բառեր քիչ կազմվող ձևեր են տալիս այն պատճառով, որ նրանցով արտահայտվող հասկացությունները համարյա չեն նպաստել մարդկային իմացության զարգացմանը: Մարդիկ պրակտիկայում քիչ են ընդլայնել այդ բառերով արտահայտվող առարկաների, իրերի իմացության շրջանակները, քիչ ձևեր են կազմվել այդ արմատներից: Այդպես են, օրինակ, երկան(ք), անիծ, աղանձ, դաղձն, գոմ, գերան, իժ, աքաղաղ և այլն:

Մյուս կատեգորիայի հնդեվրոպական բառերը թեև տվել են կազմվող ձևեր, սակայն դուրս են ընկել բառային հիմնական ֆոնդից և բառային կազմից:

* * *

Հայերենի պատմական զարգացման ընթացքում հնդեվրոպական բառերը կրել են իմաստային փոփոխություն: Իմաստափոխությունը կատարվում է անընդհատ, կապված հասարակական զարգացման, մարդկային իմացության սահմանների ընդլայնման հետ: Մարդկային բանականության նվաճումները,

մարդու աշխարհայացքի զարգացումը արտացոլվում են լեզվի մեջ ոչ միայն նոր բառերի կազմությամբ ու փոխառությունների ներմուծմամբ, այլև եղած բառերի իմաստափոխությամբ ու վերաիմաստավորմամբ: Իմաստափոխության ենթարկվում են ամենից շատ գործածվող բառերը:

Իմաստային փոփոխությունը կատարվում է ոչ միանգամից, այլ աստիճանաբար: Նախ բառը ստանում է զուգահեռ իմաստ, որը գործածվում է եղած իմաստի հետ միասին: Այնուհետև աստիճանաբար մոռացվում է առաջինը, և երկրորդ իմաստը դառնում է հիմնական: Ամեն մի նոր իմաստ տվյալ բառի հետ կապվում է՝ ելնելով նրա հիմնական իմաստի հետ ունեցած այս կամ այն ասոցիացիայից (նմանության, կցորդության): Ընդորում 2 կամ ավելի իմաստներ կարող են համագոյակցել, և բառը կլինի երկիմաստ կամ բազմիմաստ: Եթե բառի նոր իմաստը շատ է հեռանում նախորդից և գերակշռում, ապա նախկին իմաստը կորչում է, և տեղի է ունենում լրիվ իմաստափոխություն:

Իմաստային փոփոխությունների բոլոր օրինաչափությունները հատուկ են հնդեվրոպական բառերին և նրանցից կազմվող ձևերին:

Պետք է նշել, որ հնդեվրոպական բառերի մեծ մասը ունի բազմաթիվ իմաստներ, այսինքն բազմիմաստ է, սակավաթիվ բառեր չունեն զուգահեռ իմաստներ: Բազմիմաստ հնդեվրոպական բառերի թիվը հասնում է 683-ի, որոնց մեծ մասը պատկանում է բառային հիմնական ֆոնդին: Բազմիմաստ բառերը մեծ մասամբ պահպանում են իրենց իմաստները և սակավաթիվ իմաստներ են կորցրել: 272 բառեր պահպանել են բոլոր իմաստները: Իհարկե, պետք է նշել, որ այդ բառերի իմաստների մեծ մասը զուտ գրական ծագում ունի: Մյուս կողմից էլ, որոշ բառերի մի քանի իմաստներ զուտ բարբառային են: Օրինակ, ոտն բառն ունի հետևյալ բարբառային իմաստները. 1. արորի մաս, 2. ջրաղացի գործիք, 3. հրացանի ձգան, 4. անգամ («հինգ ոտ գնացելով»), կոշիկի համար, չափս: Իսկ աղբիւր բառը ունի 2 զուտ գրական իմաստ, 1. սկզբնաղբյուր (դիրք), 2. որևէ բանի հեղինակ:

Հնդեվրոպական 238 բառեր կորցրել են իրենց իմաստների մի մասը (1672 իմաստից 443-ը): Կորած իմաստները կապված են եղել հին աշխարհայացքի, մարդկային իմացության զարգացման նախորդ աստիճանների հետ: Այդպես են, օրինակ, առաստաղ բառի երկինք, էշ բառի հին ռազմական գործիք, գութանի մաս, հողմն բառի երկրի շորս կողմերը, հիվանդություն, հովիւ բառի առաջնորդ, ղեկավար, հողեոր առաջնորդ, քահանա իմաստները և այլն:

36 բազմիմաստ բառ դուրս են եկել բառային կազմից բոլոր իմաստներով:

32 բառ կրել են լրիվ իմաստափոխություն, այսինքն կորցրել են նախկին իմաստները և գործածվել նոր նշանակությամբ: Իբրև օրինակ կարելի է նշել դեղ բառը, որն սկզբնապես նշանակել է խոտ, իսկ հետո ստացել է բուժիչ նյութ իմաստը: Վերջին իմաստի լայնացմամբ դեղ բառը ձեռք է բերել 25 իմաստ, սակայն հիմնական իմաստն է բուժիչ նյութ:

Կարդալ բառի նախնական իմաստն է եղել գոշել, կանչել: Այժմ այն նշանակում է ընթերցել և դրա հետ կապված 6 այլ իմաստ ունի, իսկ նախկինը կորել է:

Այսպիսով բառային հիմնական ֆոնդին պատկանող հնդեվրոպական բառերի բազմիմաստությունը, նրանց հազվադեպ լրիվ իմաստափոխությունը ապացույց են նրանց կենսունակության և մեծ նշանակության:

* * *

Մեծ է հնդեվրոպական արմատների բառակազմական դերը հայերեն լեզվում: Նրանք կազմում են բազմաթիվ բարդ և ածանցավոր ձևեր: Համարյա բոլոր հնդեվրոպական արմատները տալիս են կազմվող ձևեր, հարստացնելով հայերենի բառային հիմնական ֆոնդը և բառային կազմը: 300 բառեր ունեն երկու և ավելի ածանցներ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենի բոլոր ածանցները կազմում են ձևեր հնդեվրոպական արմատների հետ:

Կազմվող ձևերի մեջ գերակշռում են բարդությունները: Անհրաժեշտ է նշել, որ բառակազմության պրոցեսում կատարվող որոշ փոփոխություններ նպաստում են բառային հիմնական ֆոնդի և բառային կազմի հարստացմանը: Բարդությունների բաղադրիչների ինքնուրույնության կորստի հետևանքով վերջին բաղադրիչը տեղեկացնում է ածանց դառնալու: Այդ ճանապարհով են առաջացել, օրինակ, -օրեն, -պես, -ար, -որդ և այլ ածանցներ:

Այս պրոցեսում կազմվում են նոր զուգահեռ բառեր, որոնք կարող են և տարբեր իմաստ չունենալ, սակայն կատարում են բառակազմական հատուկ դեր: Դրան նպաստում են նաև լեզվի քերականական կառուցվածքի մեջ կատարվող փոփոխությունները: Օրինակ, գոյականների հոգնակիի կազմության փոփոխության հետևանքով առաջանում են նույն բառի տարբերակներ: Այսպես, զրաբարում անէծք անեղական բառը բարդության և ածանցման մեջ մտնում էր եզակի ձևով (անիծարբեր, անիծարան, անիծակուռ և այլն), իսկ ժամանակակից հայերենում՝ հոգնակի ձևով (անէծքատու), որովհետև հոգնակի -բ մասնիկն արդեն ձուլվել է արմատին: Երբեմն նախաածանցները և նախդիրները ձուլվում են արմատին, և ստացվում են նոր բառեր: Օրինակ, առանձին և առաջ բառերն առաջացել են անձ և աջ բառերից՝ առ նախդիրի ձուլմամբ:

Այսպիսի բառերը երբեմն դառնում են արմատներ, բաղա հանդիսանալով նոր բառերի կազմության համար և զրանով իսկ հարստացնելով ոչ միայն բառային կազմը, այլև բառային հիմնական ֆոնդը: Որևէ ձևի՝ արմատի վերածվելը պայմանավորված է նրանով, որ տվյալ ածանցը գաղարում է արտադրողական լինելուց, երկրորդ՝ նրանով, որ արմատը ուրիշ կազմություններում զործածվում է այլ իմաստով: Օրինակ, ծանոթ նոր արմատում -օթ-ը այլևս չի զիտակցվում իրեն ածանց, և ծան-ը այլևս ուրիշ բառեր չի կազմում տվյալ իմաստով:

Այս ճանապարհով վերահիշյալ բառերից կազմվել են բառային հիմնական ֆոնդին պատկանող առաջնորդ, յանձնել, առաջին և այլ բառեր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ճանապարհով ծագել են 40 նոր արմատներ: Այդպիսիք են՝ բանուոր (բան-ից), համբերել (բերել-ից), եռանդ, զեռուն (եռ-ից) և այլն:

Երբեմն արմատը տարբեր կազմվող ձևերում ժամանակի ընթացքում ձևափոխվելով տարբեր իմաստներ կամ իմաստային նրբերանգներ: Այդ իմաստներով էլ լինում է մերթ բարդության առաջին բաղադրիչ, մերթ երկրորդ: Օրինակ, կիալ բառը ածանցյալ և բարդ ձևեր է կազմում կեա, կեաց, կեց, կեան, կեն, կեանս, կենս, կենդ, ձևերով: Կեա ձևը կազմում է բայական ժամանակներ՝ կեամ, կիաս: Կեաց հանգես է գալիս իրեն բարդության երկրորդ բաղադրիչ ապրող իմաստով (մենակեաց, հրկարակեաց և այլն): Կեց-ը նույն իմաստով լինում է և՛ բայահիմք, և՛ բարդության երկրորդ բաղադրիչ՝ ածանցյալ ձևերում

(կեցցէ, կեցցուք, բարեկեցիկ և այլն): Կեան մտնում է ածանցման և բարդութեան մեջ (անկեանք, դժուարակեանք): Նույն ձևը հնչյունափոխութեամբ դառնում է բարդութեան առաջին բաղադրիչ (կենարար, կենակից և այլն): Կեանս կա կեանսաբեր ձևում (հին ձև է): Այս ձևի հնչյունափոխված վարիանտն առկա է բարդութեաններում՝ որպես առաջին բաղադրիչ (կենսութախ, կենսագիր և այլն): Նույն արմատը կենց ձևով տալիս է կենցաղ բառը, որը դարձել է ինքնուրույն արմատ: Նույն արմատի ածանցյալ -կենդ ձևը ան ածանցի հետ միասին տալիս է կենդանի բառը, որը նույնպես արմատի է վերածվել:

Ուսումնասիրութեան տվյալներով մոտ 100 արմատ ածանցման ու բարդութեան մեջ մտնում են տարբեր ձևերով: Օրինակ, ակն արմատը՝ ական, ակն, ամառն արմատը՝ ամար, ամառն, ամառ, այր արմատը՝ ար, առն, այր ձևերով և այլն: Դրանցից մի քանիսն ունեն իմաստային տարբերություն, իսկ մյուսները լոկ բառակազմական միջոցներ են: Օրինակ, ակն և ական տարբերվում են իմաստով, ակն-ից կազմվում են աչք իմաստի հետ կապված բառեր, իսկ ական-ից՝ փոխաբերական իմաստի հետ կապված բառեր: Իսկ ատամն և ատամ ձևերը չեն տարբերվում իմաստով, սակայն առաջինը հանդես է գալիս միայն իբրև բարդութեան առաջին բաղադրիչ, իսկ երկրորդը կարող է հանդես գալ տարբեր ֆունկցիաներով:

Հնդեվրոպական 74 արմատներ բարդ և ածանցյալ բառերում առկա են ածանցյալ ձևերով, որոնք իրենց հերթին համարվում են ինքնուրույն միավորներ:

11 բառեր ունեն զուգահեռ ձևեր՝ իմաստային նրբերանգներով: Զուգահեռ ձևերից մի քանիսը գործածվել են դրաբարում, իսկ մյուսները՝ ժամանակակից հայերենում: Այդպես են, օրինակ, արբել և հարբել, անկանիլ և ընկնել:

Այսպիսով, հնդեվրոպական բառերը հարստացրել և հարստացնում են ոչ միայն հայերենի բառային կազմը, այլև բառային հիմնական ֆոնդը:

* * *

Հնդեվրոպական արմատների ակտիվ բառաստեղծական դերը հայերենում արտահայտվում է նաև նոստով, որ մի շարք արմատներ դառնում են ածանցներ: Այդպես են ստացվել -ար (գործ-ար-ք, մեծ-ար-ել) առնել արմատի բայահիմքի կրճատ ձևից (առ-նել > արար > ար), -արդ (խորան-արդ, գմբեթ-արդ)՝ արդ արմատից, -եղ-եղեն (մսեղէն, համեղ) եղ-անիլ արմատից, -ոտ, -(կ)ոտ (ցեխոտ, ջրոտ)՝ հոտ արմատից, -որդ (կշորդ, ճանապարհորդ, քառորդ)՝ որդի արմատից:

Այդ ածանցների առաջացումը արմատներից կատարվել է հայերենի պատմական զարգացման երկարատև պրոցեսում, 5-րդ դարից առաջ: Սա ևս ապացույց է այն բանի, որ հայերենն անցել է երկար ուղի մինչև 5-րդ դարը: